Հաստատված է 23.11.2023թ

Գավառի N 5 հիմնական դպրոցի տնօրեն՝

/Ա.Ռ.Վարդանյան/

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Թեմա՝ Նորաձևություն և ոճ

Ուսուցչուհի՝ Ա.Մկրտչյան

2023-2024

VII դասարանում << Ռուսաց լեզու>> և <<Անգլերեն լեզու>>առարկաներից իրականացվեց նախագծային աշխատանք <<Նորաձևություն և ոճ>> թեմայով:

Նախագծային աշխատանքն իրականացրեցին 4 աշակերտ՝

1. Դադոյան Անահիտ

2. Ծատրյան Ալվինա

3. Մելոյան Արևիկ

4. Սամվելյան Անի

Ուսումնական նախագիծը միջառարկայական է, կարճաժամկետ՝4 շաբաթ տևողությամբ (նոյեմբերի 1-ից նոյեմբերի 22-ը), ձևաչափը ՝ թիմային: Այն իրականացվեց 3 փուլով ՝ նախապատրաստում, ընթացք, ամփոփում:

Նախապատրաստական փուլում սովորողները ընտրեցին թեման և սահմանեցին նպատակը: Այնուհետև հիմնախնդիրը ձևակերպելուց հետո ձևավորվեց 2 աշխատանքային խումբ:

1-ին խումբը պետք է այցելեր Գավառի մանկապատենական ուսուցողական կենտրոն, իսկ 2-րդ խումբը – պետք է կապվեր դերձակ-դիզայների հետ:

2-րդ ՝տեսական մասի կատարման փուլում աշակերտները հավաքագրեցին նյութեր և տեղեկություններ՝ նորաձևությանը և ոճերին ավելի մանրամասն ծանոթանալու համար:

Խմբերը այցելեցին Գավառի մանկապատենական ուսուցողական կենտրոն,որտեղ տեղի ուսուցիչների օգնությամբ մանրամասն ծանոթացան կար ու ձևի ամբողջ ընթացքին,լուսանկարեցին և վիդեո նկարեցին, ստացան իրենց հարցերի պատասխանները: Կապ հաստատվեց մեր դպրոցի նախկին շրջանավարտ դիզայներ Թ.Ղարաբաղցյանի հետ, որը ներկայացրեց իր աշխատանքը, հաջողությունները և հայկական նորաձևության ձեռքբերումները, տրամադրեց նկարներ և հոլովակներ նորաձևության մրցույթներից:

Քննարկման փուլում վերանայվեցին և իմի բերվեցին հավաքագրվաց նյութերը, տեղեկությունները, կրիչի վրա պահպանված տեսանյութերը:Ուսուցիչների ուղղորդմամբ լուծվեցին ծագած խնդիրները, վերլուծվեցին նախագծի ներկայացման օրը ներկայացվող ոճերը և համապատասխան հագուստները:

3-րդ՝ վերջնական արդյունքների ներկայացման փուլում ամբողջովին վերանայվեցին և վերջնական տեսքի բերվեցին բոլոր նյութերը, տեղեկությունները և հոլովակները:

Աշխատանքը ներկայացվեց աշակերտների հագեցած խոսքով, հագուստի ցուցադրումով և իհարկե, սահիկահանդեսով:

Աշխատանքային խումբը,որպես անակնկալ, իրենց համադասարանցիներին նվիրեց հագուստի համար նախատեսված տարբերանշանները անհատական անուններով հենց իրենց նախագծով:

Որպես նախագծային պրոդուկտ ստեղծվեցին պաստառներ,հենց իրենց կողմից ստեղծված ցուցահանդեսային նմուշներ,գրքույկներ, որտեղ հավաքված էին հայտի դիզայներների մտքերը և թեավոր խոսքերը: Ստեղծված գրքույկներից մեկը աշակերտները նվիրեցին դպրոցին, իսկ մյուսը՝ Գավառի մանկապատենական ուսուցողական կենտրոնին:

Աշխատանքի ընթացքում սովորողները ցուցաբերեցին հետաքրքրություն, ակտիվություն, նախաձեռնողականություն: Աշակերտները դրսևորեցին ինքնուրույն և համագործաքցային հմտություններ: Աշխատանքի բովանդակությունը լիովին համապատասխանում էր թեմային, այն ամբողջական էև, պահպանված էին տրամաբանական կապերը:

Սովորողները մեր օժանդակությամբ միասին հասանք մեր նպատակին, այն է՝ տարբերել նորաձևության ոճերը, ճանաչել հայ և ճանաչված ոճաբաններին և նրանց գործունեությանը: Աշխատանքի ընթացքում նրանց մոտ զարգացան ինքնաճանաչողական, սոցիալական, լեզվական գրագիտության, մշակութային, թվային ու մեդիա կարողունակությունները, զարգացավ նրանց ճաշակը:

Բոլոր աշակերտներն էլ գնահատվեցին 10 միավորանոց համակարգով:

Դադոյան Անահիտը, Ծատրյան Ալվինան և Մելոյան Արևիկը գնահատվեցին <<9>> միավոր: Նրանք ցուցաբերեցին նախաձեռնողականություն,բարձր մակարդակով կատարեցին իրենց առաջադրանքը,ներկայացման ընթացքում խոսքը գրագետ էր,գեղեցիկ,բայց կային փոքրիկ վրիպումներ: Սահիկաշարը պատրաստելու բարդ ընթացքը իր վրա վերցրեց Մ.Արևիկը և փայլուն կատարեց, ցուցահանդեսի նկարների էսկիզները փայլուն ներկայացրեց Ծ.Ալվինան:

Սամվելյան Անին ստացավ <<7>> միավոր: Նա ևս ակտիվ մասնակցություն ունեցավ խմբային աշխատանքին, բայց ներկայացավ ոչ այդքան վստահ,թույլ տվեց թերություններ, ձայնը ցածր էր:

Ուսումնական նախագիծը կարելի է համարել ստացված: